

## Գրոդիլ Մաքսի



Ազոտը նյութը՝ յոդոսուլֆուրոն 25 գ/լ + ամիդոսուլֆուրոն 100 գ/լ + մեֆենափիր-դիէթիլ (անտիդոս 250 գ/լ;

Պատրաստուկային ձևը՝ յուղային դիսպերսիա:

Փաթեթավորումը՝ 1 Լ:

Գրոդիլ Մաքսին յուղադիսպերսիոն բանաձևով հերբիցիդ է, որն ստեղծվել է և պատենտավորվել է «Բայեր Քրոփ Սայընս» ընկերության գիտնականների կողմից Odesi տեխնոլոգիայի կիրառմամբ:

Այդ բանաձևը պարունակում է երկու ազոտը նյութեր՝ դիսպերսված հատուկ յուղի և կաչող նյութի զուգակցությամբ:

Պրա շնորհիվ այս յուղադիսպերսիոն բանաձևն ունի յուրահատուկ հատկություններ, որոնք ապահովում են՝

- աշխատանքային լուծույթի կաթիլների լավագույն կաչողականությունն մոլախոտերի տերևների վրա.
- աշխատանքային լուծույթի հավասարաչափ տարածում տերևի մակերեսի վրա.
- յուղի և կաչանյութի հեղուկ թաղանթի երկարաժամկետ առկայություն, որն ապահովում է ազոտը նյութի ներթափանցումը տերևների մեջ ամբողջությամբ առանց նրանց բյուրեղացման: Այդ ամենի արդյունքում ապահովվում է Գրոդիլ Մաքսիի բարձր և կայուն արդյունավետություն եղանակային անբարենպաստ պայմանների առկայության դեպքում, ինչպես նաև հերբիցիդային արագացված գործունեություն:

### Ազդեցության մեխանիզմը

Գրոդիլ Մաքսին արագ ներթափանցում է տերևների մեջ և մասամբ մոլախոտերի արմատային համակարգ, ընդունակ է ազատ տեղաշարժվել սննդանյութերի հետ ներքևից վերև և հակառակ ուղղությամբ: Ֆլոեմնոքսիլենային գործունեության շնորհիվ պատրաստուկը ներ է թափանցում մոլախոտերի բոլոր մասեր և կուտակվում է աճման կետերում, այդ թվում «քնած» բողբոջներում:

Կենսաքիմիական մակարդակով հերբիցիդն ազդում է ացետոլակտատ-սինթետազ ֆերմենտի վրա, որը մասնակցություն ունի ամինոթթուների կենսասինթեզի շղթայում և խախտում է սպիտակուցների սինթեզի գործընթացը, որն էլ իր հերթին դադարեցնում է մերիստեմային հյուսվածքներում բջիջների բաժանումը: Մոլախոտերի աճը և մրցակցությունը մշակաբույսերի հետ դադարում է Գրոդիլ Մաքսիով մշակումից մի քանի ժամ անց: Առաջին 5-7 օրվա ընթացքում մոլախոտերի խոցված տերևների վրա առաջանում են քլորոզային բծեր և աճման կետերը մահանում են, իսկ բույսերի ոչնչացումը ամբողջությամբ, կախված եղանակային պայմաններից, շարունակում է 3-4 շաբաթ:

### Ազդեցության շրջանակը

Ամբողջիկ օշինդրատերև, մակարդախոտ կաչուն, իշամառուլ վարդագույն, իշամառուլ դեղին, մանանեխ դաշտային, ծտապաշար, բողկուկ վայրի, շնկոտեն դաշտային, երիցուկ անհոտ, աղավնախոտ դաշտային, թելուկ սպիտակ, մատիտեղներ, հավակատար սովորական,

աստղիկ միջին, մկնականջ դաշտային, խուլ եղինջ, տերեփուկ կապույտ, կակաչ ինքնացան, մանուշակ դաշտային, վերոնիկա, հլածուկի և արևածաղկի թափուկներ, կեչի դաշտային:

Հնարավոր է ուշ կիրառման դեպքում (մշակաբույսերի թփակալման վերջում) կամ էքստրենալ եղանակային պայմաններում մոլախոտերը շատ ուժեղ ճնշվեն, զարգանան և մշակաբույսերի հետ մրցակցություն չստեղծվի:

### **Կիրառումը**

Աշնանացան և գարնանացան հացահատիկ, աշնանացան և գարնանացան գարի:

Գարնանային սրսկումներ՝ սկսված 2 տերևից մինչև 3-րդ իսկական տերևի փուլը:

Կիրառման օպտիմալ շրջանը, որը թույլ է տալիս առավելագույնը պահպանել պտենցիալ բերքը և ապահովում է լավագույն հերբիցիդային ազդեցություն՝ երկու տերևից մինչև առաջին հանգույցի փուլը:

Ծախսի քանակը՝ 0.09-0.11 լ/հա:

### **Կիրառման առանձնահատկությունները**

Խորհուրդ է տրվում մանրակաթիլ սրսկումներ դաշտային այն սրսկիչներով, որոնք ունեն հարթացող ծայրապանակներ, հեղուկի ճնշումը 2.5-3 կգ/սմ<sup>3</sup>, սրսկիչի շարժման արագությունը 6-7 կմ/ժամ, ինչպես նաև ավիացիոն փոքրածավալ սրսկումներ:

Իշամառլի առկայության դեպքում սրսկումների օպտիմալ ժամկետը, երբ մոլախոտերն ունեն 10-15 սմ բարձրություն: Ուշ կիրառման դեպքում խորհուրդ է տրվում պատրաստուկի ծախսի նորման բարձրացնել մինչև 0.11 լ/հա:

### **Ընտրողականությունը**

Գրողիլ Մաքսին օգտագործվում է հասկավոր հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, գարի, տարեկան, տրիտիկալե) դաշտերում: Շնորհիվ պատրաստուկում անտիդոտի առկայության, որը արագացնում է ազդող նյութերի քայքայումը մշակաբույսերում, բայց ոչ մոլախոտերի մեջ, այն ապահովում է արդյունավետ և հուսալի հերբիցիդային պաշտպանություն համադրած մշակաբույսի համար բարձր անվտանգություն անգամ անբարենպաստ եղանակային պայմաններում (ցածր կամ բարձր ջերմաստիճաններ):

### **Առավելությունները**

Բարձր և ցածր արդյունավետություն ցանկացած եղանակային պայմաններում շնորհիվ ինովացիոն յուղա-դիսպերսիոն կառուցվածքի:

Բոլոր լայնատերև մոլախոտերի դեմ հերբիցիդային ակտիվություն:

Արագացված ազդեցություն մոլախոտերի դեմ :

Անտիդոտի առկայության շնորհիվ յուրահատուկ ընտրողականություն:

Պատրաստուկում կաչող նյութի առկայություն:

Մոլախոտերի դեմ երկակի ազդեցություն՝ տերևների և հողի միջոցով:

Նոր մոլախոտերի դուրս գալու հավանականության կանխում:

Ցանքաշրջանառության մեջ հաջորդ մշակաբույսերի վրա ազդեցության բացակայություն:

Չափազանց հեշտ կիրառում:

Ցածր ջերմաստիճաններում պահպանելու (-35° C) հնարավորություն:

Օգտագործողի և շրջակա միջավայրի համար բարձր անվտանգություն: